սմանէ խռովեցաւ սուրբն Լօրենցիոս. Ի սմանէ փախեցան յայրին սուրբ մանկունքն Եփեսոսի։ Նա էր կռապաշտ. սպանաւ ՚ի ցեղակցաց իւրոց։

Կայոս սկսաւ յամի Տեառն Մ՟Ծ՟Գ. ինքնակալեալ ամս Գ. այր չար։ Նա ՚ի Կլէմիոյ գաւառն փորն կապեալ՝ չար մահուամբ մեռաւ։

Վաղերիանոս սկսաւ յամի Տեառն Մ՟Ծ՟Ը. ինքնակալեաց ընդ Վաղէսի ամս Ժ.Է։ Նա գնաց յԵրուսաղէմ և յայլ աշխարհ ՚ի պատերազմ և ՚ի Պարսս, և ըմբռնեալ սա, փիւռոս եղ զնա սրբող ագելից մինչև ՚ի մահ։ Ի սմանէ մարտիրոսացան սուրբքն Կիպրիանոս և պապքն Հռոմայ Մարցելլոս և Լուցիոս։ Իսկ Կայենոս որդին Վաղերիանոսի ինքնակալեաց իսկիզբն բարի, և յետոյ եղև չար։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան